

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՊՐՈՂՈՍՅԱՆ ՆԱԻՐԱՀԱԿՈՒԹԻ

**ԳԵՐՄԱՆԱԲՆԱԿ ԹՈՒՐՔ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՏՈՆՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԱՐՁԱԿՈՒՄ 1960-2000-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.
«ԳԱՍԹԱՐԲԱՅԹԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԿԱՅԱՑՈՒՄ ՈՒ
ԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ժ.01.07-«Արտասահմանյան գրականությունը ունի»
մասնագիտություն ամբիբանասիրական գիտությունը ունենրի
թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսություն**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսություն թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ **ՄԵԼՔՈՆՅԱՆ ՈՒՐԲԵՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍԻ**

Պաշտոնական ընդդիմախոսներ`

բանասիրական գիտությունների
դոկտոր,
պրոֆեսոր **ՄԱՏԻՆՅԱՆ ԿԱՐԼԵՆ
ՈՍՏՅԵԼԻ**

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ **ՍԱՏՐԱՍՅԱՆ
ԼԻԼԻԹՄԵՐՈՒԺԱՆԻ**

Առաջատար կազմակերպություն` ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 24-ին,
Ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտում գործող ԲՈՅ-ի Հայ և արտասահմանյան
գրականության 003 մասնագիտական խորհրդում: Հասցեն`
Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ.
Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու
Մարգարյան

Ս. Ա.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ատենախոսությունը նվիրված է Գերմանիայի թուրքական համայնքի գրականության կայացման և զարգացման հիմնական փուլերի ուսումնասիրությանը: Թուրքական համայնքի կայացմանը գուգահեռ իր զարգացումը սկսած գրականությունը անցել է բավական հետաքրքիր ուղի: Ձևավորված լինելով տրամագծորեն տարբեր գերմանական և թուրքական մշակույթների խաչմերուկում՝ այն կես դարից էլ քիչ ժամանակաշրջանում բացառապես ներթուրքական և ներհամայնքային խնդիրներին անդրադարձող ակնարկներին և պատմվածքներից վերածվել է առավել ընդհանուր հարցեր վերհանող, տասնյակ լեզուներով թարգմանվող և տարբեր ժանրեր ներկայացնող բազմաշերտ գրականության: Աշխատանքում փորձ է արվել վերհանել հյուր-աշխատողների՝ «գասթաբայ թերևերի» գրականության կայացման, զարգացման առանձնահատկությունները՝ սոցիալական, քաղաքական, միջմշակութային խնդիրները և ուսաբանման համապատկերում: Նախ գրականության կայացման վրա ազդող հիմնական գործոններն իցույց դնելու նպատակով քննվել են համայնքի ձևավորման հիմնական փուլերը: Ներկայացվել է գրականության անցած ճանապարհը՝ առաջին գրական անդրադարձներից դեպի «գասթաբայ թերական» գրականության հաստատուն դիրքեր: Անդրադարձել ենք Գերմանիայում հաստատված երկրորդ և երրորդ սերնդի թուրք գրողների թեմատիկ նախընտրություններին, նրանց ստեղծագործություններին առանձնահատկություններին, այդ թվում լեզվի ընտրության հարցին: Հատուկ ուշադրություն ենք դարձրել Գերմանիայի թուրքական գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմային վերաբերող անդրադարձների ներկայացմանն ու վերլուծությանը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ժամանակներում աշխարհի տարբեր երկրներում քնակվող այլ ազգիների համայնքները սկսում են ավելի ու ավելի կարևոր դերակատարում ունենալ ոչ միայն տեղական, ներքին քաղաքական ու սոցիալական գործընթացներում, այլ նաև ազդել միջազգային հարթակում քննարկվող տարատեսակ խնդիրներին ու ծման վրա՝ հաճախ հանդես գալով որպես միջազգային հարաբերություններին ինքնուրույն գործոն: Ընդ որում, ավանդական ռեբիստական գործունեությամբ հայտնի

հայ կական, հրեական սփյուռքերից բացի վերջին տարիներին ակտիվ են գործում նաև չինական, հնդկական սփյուռքերի ներկայացուցիչները:

Թուրքական պետության անմիջական աջակցությամբ ու հովանավորությամբ սկսում են բեղուն գործունեություն ծավալել եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում ձևավորված թուրքական համայնքները, որոնց հիմնական թիրախներից են Հայաստանն ու Հայկական հարցը: XX դարի երկրորդ կեսերին ակտիվացած աշխատանքային միգրացիայի արդյունքում ԱՄՆ-ից մինչև Ավստրալիա տարածված թուրքական համայնքներից ամենամեծը և իր ունեցած լծակներով ամենահզորը Գերմանիայի թուրքական համայնքն է. այստեղ են բնակվում աշխարհասփյուռք թուրք-միգրանտների 75 %: Գերմանիայի թուրքական գրականության մեջ ներկայացված է համայնքի կայացման, աշխարհայացքի ձևավորման կամ եվրոպական միջավայրում ադապտացման հետ կապված արդիական խնդիրներին ողջ սպեկտրը: «Հայկայնքային գրականության» հետազոտումը թուրյլ է տալիս առավել հստակ պատկերացնել տվյալ համայնքում առկա խնդիրները, մի շարք հարցերի շուրջ մոտեցումները: Թուրքական սփյուռքը՝ որպես համեմատաբար երիտասարդ, բայց բավական ակտիվ գործող սփյուռք, ունի համակողմանի ուսումնասիրության կարիք: «Գասթաբայ թերական» գրականության քննությունը թուրյլ է տալիս վերհանել և դիտարկել աշխարհագրական այլ հարթությունում՝ եվրոպայում հայտնված թուրքի մտածելակերպի, աշխարհայացքի որոշ առանձնահատկություններ, որոնք լավագույնս դրսևորված են գեղարվեստական ստեղծագործություններում: Կարևոր են նաև թուրքական ինքնության պահպանման և Թուրքիա-Սփյուռք հարաբերությունների հիմնախնդիրների գրական արտացոլումները:

Գերմանիայի թուրքական գրականության ուսումնասիրությունը հայկական իրականության մեջ արդիական է նաև եվրոպայի թուրքական համայնքներում Հայոց ցեղասպանության գեղարվեստական արծարծումները ներկայացնելու տեսանկյունից:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՆԴԻՐՆԵՐԸ

Ասեմախոսության նպատակն է ներկայացնել «գասթաբայ թերական թեմատիկայի», Գերմանիայի թուրքական գրականության ձևավորումն ու զարգացումը՝ թուրքական համայնքի կայացման

համապատկերում, ցույց տալ գրականության թեմատիկ առանձնահատկությունները: Դրա համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել Գերմանիայի թուրքական սփյուռքի կայացման հիմնական փուլերը և խնդիրները 1960-2000-ական թվականներին:
2. Քննել XX դարի կեսերի թուրք գրականության մեջ «գասթարբայ թերական» ուղղվածության ձևավորման և կայացման նախադրյալներն ու առանձնահատկությունները:
3. Ներկայացնել Գերմանիայի թուրքական գրականության զարգացման փուլերը, թեմատիկ և ժանրային առանձնահատկությունները:
4. Ի ցույց դնել համայնքային տարբեր խնդիրների և զարգացումների ազդեցությունը թուրք գրողների գրական թեմաների ընտրության վրա:
5. Ներկայացնել միջմշակութայինության ազդեցությունը Գերմանիայի թուրքական գրականության վրա և դրա թեմատիկ ու ժանրային դրսևորումները:

ԱՇԽԱՏԱԼԵԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Սույն առենախոսությունը հայաստանյան իրականության մեջ Գերմանիայի թուրքական համայնքի կայացման և զարգացման համապատկերում «գասթարբայ թերական» թեմատիկային, թուրքական սփյուռքի գրականության ուսումնասիրությանը նվիրված առաջին աշխատությունն է: Հատկապես վերջին ժամանակներս սփյուռքագիտության նկատմամբ աճող հետաքրքրության պարագայում՝ գրականության մեջ իրար տացուղումը գտած թուրքական սփյուռքի մշակութային և գաղափարախոսական պատկերի վերհանումը ևս իր բնույթով նոր է մեզանում: Առենախոսության մեջ ներկայացված են Գերմանիայի թուրքական գրականության զարգացման աստիճանական փուլերը: Առաջին անգամ հայ իրականության մեջ շրջանառության են դրվում գերմանաբնակ թուրք գրողներ Էմինե Սևգի Օզդամարի և Չաֆեր Շենոջաբի գրական անդրադարձները հայոց ցեղապանության խնդրին:

ԱՇԽԱՒՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆԸ

Առենախոսության համար որպես մեթոդաբանական հենք են ծառայել գրականության վերլուծության

համաժամանակյա, համեմատական-տիպաբանական մեթոդները: Որոշակի տեղ է տրված նաև սփյուռքագիտական տեսական դրույթներին, որոնք վերաբերում են ինչպես համայնքներին ստեղծմանը, այնպես էլ սոցիալական, մշակութային և հոգեբանական կադապրածների ձևավորմանը:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կարող է օգտակար լինել ՀՀ բուհերում ժամանակակից թուրքական գրականության և պատմության դասավանդման, ինչպես նաև XX-XXI դարի սկզբի գրականությանը վերաբերող դասաքրքերի, ուսումնական ձեռնարկների ստեղծման համար: Ատենախոսության որոշակի դրույթներ կարող են նպաստել թուրքական գրականության շուրջ կատարվող ուսումնասիրություններին, ինչպես նաև թուրքական սփյուռքը հետազոտելու գործին: Թեմային վերաբերող հոդվածներն արդեն կիրառվում են ԵՊՀ թուրքագիտության ամբիոնում նորագույն շրջանի թուրք գրականության և Թուրքիայի պատմության դասավանդման գործընթացում: Աշխատանքը կարող է օգտակար լինել միգրանտական գրականության ոլորտում համեմատական-վերլուծական ուսումնասիրություններ, ինչպես նաև տարբեր երկրներում բնակվող թուրքական համայնքներին կայացմանը և զարգացմանը նվիրված վերլուծություններ ու ներդրում թուրքերի և եվրոպաբնակ այլ մուսուլմանների խնդիրներին վերաբերող համեմատական հետազոտություններ կատարելիս:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում: Աշխատանքը քննարկվել և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի ընդլայնված նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած մենագրության մեջ և գիտական հոդվածներում, ինչպես նաև Հայաստանում և Ռուսաստանում կայացած հանրապետական ու միջազգային գիտաժողովներում: Աշխատանքի շրջանակներում գրված երկու գեկուցում արժանացել են Մոսկվայի պետական համալսարանի ամենամյա «Ընդունոսով» միջազգային երիտասարդական ֆորումի առաջին մրցանակին՝ արևելագիտություն և նվանակարգում:

ԱՏԵՆԱԴՈՒՄԻ ԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմանները 1960-2000-ականներն են: 1961 թ. ստորագրված միջպետական պայմանագրի հիման վրա սկսվեց թուրքերի արտագաղթը Գերմանիա: 1960-ականների վերջից 1980-ականների կեսերը գրականության ձևավորման շրջանն էր, որը պայմանավորեց համարել ենթաթուրքական գրականության կայացման առաջին փուլը: Գերմանիայի թուրքական գրականությանը զարգացման հաջորդ փուլը ընդգրկում է 1980-ականների վերջից 2000-ականներն ընկած ժամանակահատվածը: Այս շրջանում գրական կյանք է մտնում թուրք միգրանտների երկրորդ սերունդը՝ իր հետքերը ով գրական նոր թեմաներ ու հարցադրումներ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել թուրքերեն աղբյուրները՝ թուրք գրողների վեպերն ու պատմվածքների ժողովածուները, ինչպես նաև հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն գիտական աշխատություններ, հոդվածներ, մամուլի իրապարակումներ:

Գերմանիայի թուրքական համայնքի ձևավորման պատմությունն ու կայացման հիմնական փուլերը ուսումնասիրելու և ներկայացնելու համար մեծապես օգտվել ենք խորհրդային թուրքագետներ Յու. Ռոզալիևի¹, Ռ. Ստարչենկովի², Ա. Պրոկոպովիչի³ աշխատություններից, որոնք չնայած պարունակում են խորհրդային գաղափարականացված քարոզչության որոշ տարրեր, սակայն ունեն հարուստ փաստագրական հիմք և հնարավորինս մանրամասն են ներկայացնում թուրքերի արտագաղթի պատճառներն ու ընթացքը: Գերմանիայի

¹ Розалиев Ю., Классы и классовая борьба в Турции, Москва, 1967, նույնի, Особенности развития капитализма в Турции (1923-1960 гг.), Москва, 1972, նույնի, Экономическая история Турецкой Республики, Москва, 1980.

² Старченков Р. Трудовые ресурсы Турции. Демографический, экономический и социальные аспекты, Москва, 1981, նույնի, Проблема занятости и миграции населения Турции, Москва, 1975.

³ Прокопович А., Социально-экономические проблемы миграции турецких рабочих в страны Западной Европы, Турция: История, экономика, политика, Москва, 1984, стр. 224-245.

թուրքական համայնքում տեղի ունեցող համեմատաբար նոր գաղափարներին են նվիրված Յ. Նահապետյանի⁴, ինչպես նաև շուտ հետազոտողներ Ս. Ուտուրգաուրիի⁵, Ս. Սումելյոննիի⁶, Ն. Գուրբանովի⁷ աշխատություններն ու վերլուծական հոդվածները: XX դարի կեսերին թուրքիայում տիրող իրադրության, միգրացիայի սկզբնավորման, ընթացքի և հետևանքի մասին հետաքրքիր անդրադարձ կա Ռ. Քասաբայի խմբագրությամբ Քեմբրիջում տպագրված «Թուրքիայի պատմություն» գրքում⁸: Յամայնքի մասին կարևոր տեղեկություններ ենք ստացել նաև թուրք հեղինակներ Բ. Սորթանի⁹, Ա. Գիթմեզի¹⁰, Ա. Ուղուրլուի¹¹, Մ. Գյուրի¹², Յ. Քեսքիսի¹³, Ֆ. Շենի¹⁴, Բ. Թուրանի¹⁵, Օ. Թուրքոդանի¹⁶ աշխատություններից: Այս շարքում կուզենայինք հատկապես առանձնացնել թուրք նախկին դիվանագետ Ջ. Ունվերի հոլշերը¹⁷, որոնցում կարևոր անդրադարձներ կան դեռևս 1980-ականներին Գերմանիայի թուրքական դեսպանատան կազմակերպած հակահայ կական գործողություններին: Թուրքական համայնքի արդի վիճակին նվիրված ուշագրավ աշխատություն է գերմանացի տնտեսագետ Թ. Սարրացիսի «Գերմանիա. ինքնալիկվիզացում» գիրքը¹⁸, որը լուրջ

⁴ Նահապետյան Հ., Թուրք-արբեջանական կառույցների հակահայկական գործունեությունը, Երևան, 2010:

⁵ Утураури С., Турецкая диаспора в Германии. Социокультурная эволюция, Сборник "Ближний Восток и современность". Выпуск 21, Москва, 2004, стр. 457-467.

⁶ Сумленный С., Турецкое население Германии: Бомба замедленного действия, «21-й ВЕК», N 1 (3), Ереван, 2006, стр. 47-61.

⁷ Губанов Н., Роль диаспоры в системе турецко-германских экономических отношений, Современная Турция: проблемы и решения, Москва, 2006, стр. 184-214.

⁸ The Cambridge History of Turkey, vol. 4: Turkey in the Modern World, Edited by Reşat Kasaba, London, 2008.

⁹ Mortan K., Sarfati M., Vatan Olan Gurbet. Almanya'ya İşçi Göçünün 50. Yılı, İstanbul, 2011.

¹⁰ Gitmez A. S., Yurtdışına İşçi Göçü ve Geri Dönüşler "Beklentiler..Gerçekleşenler", İstanbul, 1983.

¹¹ Uğurlu A.R., Almanci Yabancılar, İstanbul, 1997.

¹² Gür M., Sütü Küstürmek. Almanya'da Anadolu Kadınları, İstanbul, 2004.

¹³ Keskin H., Göçün 50 yılında Türklerin Gölgesinde Almanya. Geleceğe Yönelik Uyum Politikası İçin Görüşler, İstanbul, 2011.

¹⁴ Şen F., 50. Yılında Göç, Ankara, 2011.

¹⁵ Turan K., Almanya'da Türk olmak, İstanbul, 1992.

¹⁶ Türkdoğan O., İkinci Neslin Dramı Avrupa'daki İşçilerimiz ve Çocukları, İstanbul, 1984.

¹⁷ Ünver C. O., Otuzbeş Yıllık Göç ve Bürokrasi Tanıklıklarım, Ankara, 2008.

¹⁸ Саррацини Т., Германия. Самоликвидация, Москва, 2012.

աղմուկ բարձրացրեց և քննադատության ամարկադարձավ: Պետք է նշենք, որ այս աշխատության նունմտեղ է գտել շատ կարևոր փաստագրական նյութ, իսկ հեղինակի դատողությունները թեև երբեմն զգացմունքային են, սակայն արտացոլում են իրականությունը:

Ատենախոսության համար օգտակար տեսական գրականագիտական աշխատություններին հարկ ենք համարում ամանձնացնել Էդ. Ջրբաշյանի¹⁹, Մ. Բախտինի²⁰, Վ. Խալիզևի²¹ մենագրությունները:

Մեթոդաբանական և պատասխանարություններից ելնելով՝ Գերմանիայի թուրքական գրականության կայացումն ու զարգացումը դիտարկել ենք XX դարի կեսերի թուրքական արձակի համապատկերում: Այդ արձակի որոշակի ամանձնատկություններն ուսումնասիրման համար օգտագործել ենք հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն հետազոտություններ: Հայերեն աշխատություններից հատկապես կարևորում ենք հայ թուրքագետներ Ա. Սաֆարյանի²², Ռ. Մելքոնյանի²³, Ս. Գալշոյանի²⁴, Ա. Մարտիրոսյանի²⁵, Է. Խաչատրյանի²⁶ ժամանակակից թուրք գրականության տարբեր ասպեկտներին նվիրված աշխատություններն ու

¹⁹Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980, նույնի, Գրականագիտության ներածություն, Երևան, 2011:

²⁰Бахтин М., Вопросы литературы и эстетики: Исследования разных лет, Москва, 1975.

²¹Хализев В., Теория литературы, Москва, 1999.

²² Սաֆարյան Ա., Չիյա Գոքալ փը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012

²³ Մելքոնյան Ռ., Թուրք գրող Ֆաբիր Բայբուրթի «Գերանդին» վեպը, «Գարուն», N 12, Երևան 2004, էջ 71-73, նույնի, Թուրք գրող Ֆաբիր Բայբուրթը, «Նոր-դար», N 4, Երևան, 2004 էջ 117-124, նույնի, Գյուղական ինստիտուտները» և գրական կյանքը Թուրքիայում (1940-50-ական թթ.), «Կանթեղ», N 1 (22), Երևան, 2005, էջ 139-144, նույնի, "Գասթաբայթերներ" թեմատիկան թուրք գրող Ֆաբիր Բայբուրթի ստեղծագործություններում, Արևելագիտության հարցեր, հ. 6, 2006, էջ 258-261, նույնի, Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Երևան, 2010, նույնի, Çağdaş Türk Edebiyatında İslamlaştırılmış Ermeni Kadın İmajı, Toplumsal Tarih, İstanbul, N 197, 2010, s. 36-42.

²⁴ Գալշոյան Ս., Դասակարգերի փոխարարությունն ինդիքը Յապը Քեմալի «Թիթեղը» վիպակում, Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 342-362:

²⁵ Մարտիրոսյան Ա., Թուրքական քաղաքական վեպի թեմատիկ ամանձնատկություններին շուրջ (1980-ական թվականներ), Արևելագիտության հարցեր, հ. 7, Երևան, 2012, էջ 371-378:

²⁶ Խաչատրյան Է., Օրհան Քեմալ. գրական դիմակարի փորձ, Արևելագիտության հարցեր, հ. 7 Երևան, 2012, էջ 363-370:

հոգվածները, որտեղ հեղինակներն անդրադառնում են XX դարի թուրքական արձակի գարգացման ուղղությամբ ունենալիս:

XX դարի թուրքական արձակի առանձնահատկություններին բավական խորը և համակողմանի է անդրադարձել խորհրդային արևելագիտությանը: Հանդիպել ենք հարկ է առանձնացնել և կարևորել խորհրդային ու ռուսաստանյան գիտնականներ Լ. Ալկանայի²⁷, Ա. Բաբանի²⁸, Ն. Յակովլևայի²⁹, Ի. Բարոլինայի³⁰, Ռ. Ֆիշի³¹, Ս. Ուտուրգաուրիի³², Ե. Մաշտակովայի³³, Մ. Ռեպենկովայի³⁴, Վ. Սլոբոդենյուկի³⁵ աշխատությունները:

XX դարի թուրք գրականության տարբեր ուղղություններին, հոսանքներին, թեմատիկ առանձնահատկություններին վերլուծությանն են նվիրված թուրք գրականագետներ Թ. Հալմանի³⁶, Գ. Այթաչի³⁷, Յ. Շաղաթի³⁸, Մ. Ունլուկի³⁹ աշխատությունները: Մեր ատենախոսության մեջ կարևորել ենք նաև թուրք գրողների տեսական հայացքներն ու գրական բանավեճերը,

²⁷Алькаева Л., Из истории турецкого романа (20-50-е годы XX в.), Москва, 1975, նույնի, Очерки по истории турецкой литературы (1908-1939), Москва, 1959, նույնի Сюжеты и герои в турецком романе, (конец XIX начало XX вв), Москва, 1966.

²⁸Бабаев А., Очерки современной турецкой литературы, Москва, 1959.

²⁹Яковлева Н., Турецкая новелла от первых шагов до поры зрелости, в книге «Плата за молчание» рассказы турецких писателей, Москва, 1974.

³⁰Баролина И., Турецкая народная песня/ Тюркские литературы и фольклор, Москва, 2004.

³¹Фиш Р., Писатели Турции: Книги и судьбы, Москва, 1963, նույնի, Турецкие дневники. Встречи. Размышления, Москва, 1977.

³²Утургаури С., Турецкая проза 60-70-х годов: основные тенденции развития, Москва, 1982, նույնի, О некоторых особенностях современного турецкого критического реализма (на примере новеллистики Бекира Йылдыза), Народы Азии и Африки: история, экономика, культура, N 6, Москва, 1976, стр. 114-124.

³³Маштакова Е., К истории турецкого романа, Вопросы тюркской филологии, N 4, Москва, 1999, стр. 207-216.

³⁴Репенкова М., От реализма к постмодернизму. Современная турецкая проза, Москва, 2008.

³⁵Слободенюк В., Художественная литература турецкой диаспоры в Германии во второй половине XX-го начале XXI-го века: к вопросу о культуре пограничья, Научные проблемы гуманитарных исследований, N 4, Пятигорск, 2011, стр. 33-38.

³⁶Halman T. S., A millenium of Turkish literature (Concise history), Ankara, 2009.

³⁷Айтач Г., Çağdaş Türk Romanı Üzerine İncelemeler, Ankara, 2012.

³⁸Ecevit Y., Türk Romanında Postmodernist Açılımlar, İstanbul, 2004.

³⁹Ünlü M., Türkçede Öykü-Roman, İstanbul, 2009.

որոնք վերաբերել են թուրքական վեպին և դրա թեմատիկ առանձնահատկություններին⁴⁰: Կցանկանայինք հատուկ առանձնանցնել գրող Յ. Փազարբայայի՝ Գերմանիայի թուրք գրականության կայացմանը նվիրված հոդվածը⁴¹, որը բազմակողմանի և խորությամբ ներկայացնում է խնդիրը: Նաև նշենք Չենոջափի⁴² երկու հրատարակատեսակների հոդվածները, որոնք լույս են սփռում համայնքի արդի խնդիրների վրա:

Գերմանիայի թուրք գրականությանը վերաբերող ուսումնասիրություններին հարկ է նշել Լ. Ադելսոնի⁴³ հիմնարար աշխատությունը, գրականագետներ Թ. Չիզմանի և Կ. Յեշիլատայի խմբագրությունում տպագրված և գերմանալեզու թուրք գրող Չաֆեր Չենոջափի ստեղծագործական կյանքը ներկայացնող գերմաներեն-անգլերեն երկլեզու ժողովածուն⁴⁴, Բ. Օսուրի⁴⁵ թուրք-գերմանական մշակութային կապերը ներկայացնող գիրքը, Ա. Օզթուրքի գաթարաբայ թերական բանախոյունությունը նվիրած աշխատությունը: Առանձնացնենք նաև Թ. Էփզի⁴⁶, Ի. Բոյազըլի⁴⁷, Մ. Գյոբենլի⁴⁸, Ի. Օզբաբըրի⁴⁹, Յ. Քոջադորուի⁵⁰, Է. Չենգինի⁵¹ հոդվածները, որոնք կարևոր տեղեկատվական աղբյուր են հանդիսացել:

⁴⁰ Beş Romancı Köy Romanı Üzerine Tartışıyor, İstanbul, 1960.

⁴¹ Pazarkaya Y., Göç Süreciyle Yurtdışında Oluşan Türk Edebiyatı; Türk Edebiyatı Tarihi, Ankara-İstanbul, 2007.

⁴² Şenocak Z., Turkey: The lost generation, http://www.ghi-dc.org/files/publications/bu_supp/supp006/bus6_175.pdf

⁴³ Adelson L. A., The Turkish Turn in Contemporary German Literature: Toward a New Critical Grammar of Migration, New York, 2005.

⁴⁴ Zafer Şenocak, ed. By Cheessman T., Yeşilada K., Cardiff, 2003.

⁴⁵ Onur B., Alman Kültüründe Türk İmgesi 1, Ankara, 1993, İnuşlu Almanya’da Türk Kültürü- Çok-Kültürlülük- Kültürlerarası Eğitim, İstanbul, 2012.

⁴⁶ Ekiz T., Avrupa Türk Edebiyatı ve Bir Temsilcisi: Emine Sevgi Ozdamar, Journal of Arts and Science, N 7, Ankara, 2007, ss. 33-47.

⁴⁷ Boyacı I., Pazarkaya Örneğinde Göçmen Türk Aydınının Kimlik Problemi ve Bu Problemin Çözümü, Turkish Studies, International Periodical for The Languages, Literature and History of Turkish or Turkic, Volume 5/2 Spring, 2010, 878-896, http://www.turkishstudies.net/makaleler/1442262050_boyac%0c4%0b1_ismail.pdf

⁴⁸ Göbenli M., Göç Ve Edebiyat, MULTTUDES/ALTYAZI, Paris, No. 3-4, 2003, s. 3-11.

⁴⁹ Özbakır I., Almanya “Konuk İşçi Edebiyatı”nın Bir Türk Temsilcisi Renan Demirkan’ın Üç Şekerli Demli Çay”ında Kimlik Problemi, Türklük Bilimi Araştırmaları, N 9, 2000, s.211-222, /, <http://www.ibrahimozbakir.com/privat/makaleler/demirkan.pdf>,

⁵⁰ Kocadoru Y., Yüksel Pazarkaya ve Nevfel Cumart’ın Şiirlerindeki Almanya İmgelerinin Karşılaştırılması, Osmangazi Üniversitesi Sosyal Bilimler Dergisi Cilt: 5, N 1, Eskişehir, 2004, s. 67-73.

Ատենախոսության մեջ քննության ենթ ենթարկել թուրք գրողներ Բ. Յըլդըզի (1933-1998)⁵², Ֆ. Բայքուրթի (1929-1999)⁵³, Ա. Արաօղլունի (ծնվ. 1929 թ.)⁵⁴, Դ. Աքչամի (1930-2003)⁵⁵, Ա. Օրենի⁵⁶ (ծնվ. 1939 թ.), Յ. Փազարթայայի (ծնվ. 1940 թ.)⁵⁷, Գ. Դալի (ծնվ. 1944 թ.)⁵⁸, Ն. Բեհրամի (ծնվ. 1946 թ.)⁵⁹, Է. Ս. Օզդամարի (ծնվ. 1946 թ.)⁶⁰, Յ. Բեքթաշի (ծնվ. 1951թ.)⁶¹, Ռ. Դեմիրքանի (ծնվ. 1955 թ.)⁶², Չ. Շենոջաքի (ծնվ. 1961 թ.)⁶³, Յ. Քարայի (ծնվ. 1965 թ.)⁶⁴ ստեղծագործությունները: Ատենախոսության մեջ ընդգրկել ենք նաև գրողներ Է. Օզդենի (ծնվ. 1947 թ.)⁶⁵, Ս. Շեյնհարթի (ծնվ. 1946 թ.)⁶⁶, Ս. Թուրանի (ծնվ. 1953 թ.)⁶⁷, Բ. Յալչինի (ծնվ. 1952թ.)⁶⁸ գործերը,

⁵¹ Zengin E., Türk-Alman Edebiyatına Tarihsel Bir Bakış ve Bu Edebiyata İlişkin Kavramlar, Hacettepe Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, Bahar (12), Ankara, 2010, s. 329-349, <http://Hutad.Hacettepe.Edu.Tr/Index.Php/Hutad/Article/Viewfile/121/87>

⁵² Yıldız B., Alman Ekmeği, İstanbul, 2011, İnyüñ Beyaz Türkü, İstanbul, 2010, İnyüñh Türkler Almanya'da, İstanbul, 2012, Ыылдыз Б., Солнце в стене: повести и рассказы турецких писателей, Москва, 1979.

⁵³ Baykurt F., Yarım Ekmek, İstanbul, 2002, İnyüñh Koca Ren, İstanbul, 2003, İnyüñh Barış Çöreği, İstanbul, 1982, İnyüñh Yüksek Fırınlar İstanbul, 2002.

⁵⁴ Ağaoglu A., Fikrimin İnce Gülü, İstanbul, 2006.

⁵⁵ Akçam D., Sevdam Ürtü, Ankara, 1998.

⁵⁶ Ören A., Beklenmedik Bir Ziyaretçi, İstanbul, 1995, İnyüñh Berlin Savignyplatz, İstanbul, 1993, İnyüñh Muhteşem Gündoğdu, İstanbul, 2011, İnyüñh Nar Çiçeği, İstanbul, 1988, İnyüñh Özel Bir Sürgün, İstanbul, 2004.

⁵⁷ Pazarkaya Y., Kemal ile Burak. Cennet Ülkesine Yolculuk, Ankara, 1998, İnyüñh Oturma İzni, İstanbul, 1977.

⁵⁸ Dal G., E-5, İstanbul, 1979, İnyüñh İş Sürgünleri, İstanbul, 1976, İnyüñh Kilları Yolunmuş Maymun, İstanbul, 1988.

⁵⁹ Behram N., Kız Ali, İstanbul, 2001, İnyüñh Gurbet, İstanbul, 1998.

⁶⁰ Özdamar E. S., Annedili, İstanbul 2013, İnyüñh Aynadaki Avlu, İstanbul, 2012, İnyüñh Haliçli Köprü, İstanbul, 2008, İnyüñh Hayat Bir Kervansaray, İstanbul, 2008, İnyüñh Tuhaf Yıldızlar Dünyaya Bakıyorlar Gözlerini Kırpmadan, İstanbul, 2012.

⁶¹ Bektaş H., Kapıkule Nerde, İstanbul, 1983, İnyüñh Hamriyanım, İstanbul 1989, İnyüñh, Gölge Kokusu, İstanbul, 2000.

⁶² Demirkan R., Üç Şekerli Demli Çay, İstanbul, 1991.

⁶³ Şenocak Z., Dünyanın İki Ucu, İstanbul, 2011, İnyüñh Tehlikeli Akrabalık, İstanbul, 2006, İnyüñh Yolculuk Nereye, İstanbul, 2007.

⁶⁴ Kara Y., Selam Berlin, İstanbul, 2004.

⁶⁵ Özgen E., Derin Sularda, İstanbul, 1990.

⁶⁶ Scheinhardt S., Pusuda Kin, İstanbul, 2006.

⁶⁷ Turan S., Şok: Bir Hostesin Anıları, İstanbul, 1993.

⁶⁸ Yalçın K., Yaşama Gücü, İstanbul, 2013, İnyüñh Anadolu'nun Evlatları: Yüz Yılın Tanıkları, Köln, 2008, İnyüñh Sarı Gelin, İstanbul, 2005.

որոնք համեմատաբար ավելի քիչ են հայ տնի ընթերցողների և մասնագետների շրջանում:

ԱՏԵՆԱԽՈՒՄԻ ԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածություն մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի հիմնական նպատակները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽԱՌԱՅԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐքԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԱՆԴՐԱԴՐՁՆԵՐԸ ՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ

Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐքԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ** ենթագլխում ներկայացված է թուրքական սփյուռքի կայացման համառոտ պատմությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մասնատված ու հսկայական մարդկային կորուստներ կրած Գերմանիան արդեն 1950 թ. կարողացավ վերականգնել արդյունաբերությունը նախապատերազմյան մակարդակը, իսկ 1956 թ. ավելացնել այն կրկնակի անգամ: Տնտեսության զարգացմանը զուգընթաց, սակայն, ավելի ու ավելի ակնառու էր դառնում աշխատանքի ներքին շուկայում առաջացած բացը, որը գերմանական իշխանությունները որոշեցին լրացնել ավելի թույլ զարգացած երկրների հետ հյուր-աշխատողներ (գերմաներեն՝ Gastarbeiter) հրավիրելու վերաբերյալ միջպետական պայմանագրեր կնքելու միջոցով: Օրըստօրե հզորացող գերմանական տնտեսության համար աշխատուժի մատակարար դարձավ նաև Թուրքիայի Հանրապետությունը: 1950-ականների վերջում բնակչության արագ աճի, ահռելի չափերի հասնող գործազրկության, աղքատության տարածման, գյուղաբնակների հողազրկության, ռազմական ծախսերի մեծացման, տնտեսական և քաղաքական միջարք խնդիրների պատճառով ծանր վիճակում գտնվող Թուրքիայի կառավարող շրջանակներին նման պայմանագիրը հնարավորություն էր տալու նվազեցնել

գործազուրկների թիվը և էականորեն թուլացնել առկա սոցիալական լարվածությունը: 1961 թ. Գերմանիայի և Թուրքիայի միջև ստորագրվեց հյուր-աշխատողների ընդունման միջպետական պայմանագիրը և սկսվեց թուրք «գաթարբայ թերների» առաջին խմբերի մեկնումը Գերմանիա: Իսկ 1980 թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո երկրում սկսված քաղաքական բռնաճնշումներն ու հավածանքները դեպի Գերմանիա արտագաղթի նոր ալիքի պատճառ դարձան: Արդյունքում ներկայումս Թուրքիայում բնակվում է մոտ երեք միլիոն թուրք: Համայնքի ձևավորումից անցած 50 տարիների ընթացքում թուրքերի դերը գերմանական հասարակության նույնիսկ շատ փոխվել է: Թուրքերն ներկայացված են գերմանական հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Գնալով մեծանում է նրանց մասնակցությունը Գերմանիայի քաղաքական կյանքում: Այս ենթազվիտում անդրադառնում ենք նաև գերմանաբնակ թուրքերի նկատմամբ Թուրքիայի Հանրապետության վարած քաղաքականությանը:

Երկրորդ՝ XX ՂԱՐԻ ԹՈՒՐԵԱԿԱՆ ԱՐԱՍԿԻ ԿԱՅԱՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ (1920-1970-ականներ)

Ենթազվիտում համառոտ ներկայացված է թուրքական գրականության մեջ արձակի ժանրի կայացման պատմությունը, անդրադարձել ենք XX դարի կեսերին թուրքական արձակում «գաթարբայ թերական» թեմատիկայի սկզբնավորմանը: XIX դարի կեսերին Օսմանյան կայսրությունում ընթացող թանգիմայան բարեփոխումների արդյունքում սկիզբ առած հասարակական կյանքի տարբեր ոլորտների եվրոպականացման համատեքստում թուրք գրականության մեջ արեզիայի կողքին սկսեց ձևավորվել և հետզհետե իր հաստատուն տեղը գրավել արձակը: Օսմանյան արձակի կայացման հարցում փոքր չէ նաև թուրքահպատակ հայ գրողների ներդրումը: Օրինակ, Հովսեփ Վարդանի վաշայի (1813-1879) հայ ստառ թուրքերենով գրված «Պատում Աքաբիի մասին» ստեղծագործությունը վերլուծելիս գրականագետ Ե. Մաշտակովան ընդգծում է, որ այն Թուրքիայում նոր տիպի առաջին արձակ ստեղծագործությունն էր, իսկ հեղինակի կիրառած շատ գեղարվեստական միջոցներ դեռ երկար ժամանակ անհասանելի են եղել հաջորդ սերնդի գրողների համար: XX դարի առաջին քառորդում առաջին հաճախ պարզունակ և գեղարվեստական արտահայտչամիջոցներից գուրկ ստեղծագործություններին փոխարինելու եկան Օմեր Սեյֆեդդինի (1884-1920), Հալիդե Էդիփի (1884-1964), Յաքուբ Քադրի Քարաօսմանօղլունի (1889-1974) անհամեմատ ավելի

հասուն ստեղծագործությունները: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո գրականության կարևորագույն թեմա դարձավ թուրքիզմը: Պատահական չէ, որ այդ շրջանի շատ գրողների ստեղծագործությունները հեղեղված են ազգայնամոլական ստրամադրություններով: 1923 թ. հանրապետության հռչակումից հետո այս ուղղությունը իր տեղը գիջում է քեմալիզմի և քեմալական շարժման գովերգմանն ու փառաբանմանը նվիրված ստեղծագործություններին:

Քարոզչական-հայրենասիրական բնույթի այս թեմաներին զուգահեռ գրողներն անշուշտ չէին կարող չանդրադարձնել նաև հասարակ ժողովրդի խնդիրներին, չարժարժել սոցիալական թեմաներ: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ XX դարակազմից արձակի հիմնական ուղղությունը մեալիզմն էր և, մասնավորապես, քննադատական մեալիզմը: Ուստի պատահական չէ, որ Ռեֆիք Չալիդ Քարայի, Հուսեյն Ռահմի Գյուրպիևարի (1864-1944), ալեյի ու Նան Ռեշադ Էնիսի (1889-1956), Սաբահադդին Ալիի (1907-1948), ստեղծագործություններում կարևորագույն տեղ է զբաղեցնում գյուղի ու քաղաքի սովորական մարդկանց աղքատության, փոքր ու մեծ ողբերգությունների, չարքաշ կյանքի արտացոլումը: 1950-ականների թուրքական մեալիստական գրականության գրողների գլխավոր թեման է դառնում «գյուղն» իր բոլոր խնդիրներով: 1960-ականների երկրորդ կեսից «սոցիալական մեալիզմը» սկսում է աստիճանաբար գիջել դիրքերը, և թուրք գրականությանն անցում է գարգացման նոր փուլ: Մոդեռնիստական տարբեր ուղղությունների ազդեցության տակ թուրք գրականությունը մտան մի կողմից «անսպասակարկեստի» կամ «մաքուր արվեստի» գաղափարներ, մյուս կողմից 1960 թ. մայիս 27-ի հեղաշրջման արդյունքներից հիասթափությունը նպաստեցին «հուսահատության կամ ճգնաժամի գրականության» զարգացումը: 1971 թ. մարտի 12-ի մազմական միջամտություններից հետո ստեղծված քաղաքական իրավիճակում գրականության մեջ գերիշխող դարձավ քաղաքական վեպը:

Երրորդ ենթաբաժնում՝ **ԹՒՐԹԱԲԱԿ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՆԴՐԱՂԱԲՆԵՐԸ ՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ «ԳԱՍԹԱՐԲԱՅԹԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԶԵՎԿՎՈՐՈՒՄԸ** ներկայացվում է 1960-ականներին սկսված և մինչև 1980-ականները զարգացում ապրող «գասթարբայ թերական» թեմատիկան թուրքիայում բնակվող, բայց միգրանտական փորձ ունեցող գրողների ստեղծագործություններում: Այդ թեմատիկայով գրված ստեղծագործություններում հիմնականում նկարագրվում էին Եվրոպա մեկնած

միգրանտների սոցիալական, բարոյական, հոգեբանական վիճակը, անսովոր միջավայրում հարմարվելու դժվարությանը և ներքին, տեղացիների անհանդուրժողականության դրսևորումները: Թուրք հեղինակներն անդրադառնում էին նաև Թուրքիայի ընդհանուր իրավիճակի, առանձին մարդկանց ու ընտանիքների կյանքի վրա արտագաղթի ազդեցությանը: Միգրացիայի արդյունքում առաջ եկած այս և բազմաթիվ այլ խնդիրներ թուրք գրականության մեջ առաջին անգամ բարձրաձայնել է հայ տնի գրող Բեքիր Յըլդըզը, ով 1966 թ. հրատարակեց «Թուրքերը Գերմանիայում» ինքնակենսագրական վեպ-եպոքոստեմ, որը մասնագետներին կարծիքով ամբողջովին չէր բացահայտում հեղինակի գեղարվեստական տաղանդը, սակայն աչքի էր ընկնում նորարական, արդիական թեմայով: «Գասթարբայ թերական» թեմատիկային են նվիրված նաև հեղինակի «Սալտակ երգ», «Երկաթե տիկնիկ», «Գերմանական հաց» ժողովածուները: Լինելով թուրքական քննադատական ռեալիզմի ներկայացուցիչ՝ Բ. Յըլդըզը իր ստեղծագործությանը ներկայացնում էր «Ուրֆայի խուլ գյուղը» (որտեղից էլ ինքն էր ծագումով), գյուղացիների չարքառ առօրյան, նրանց կյանքը պայմանավորող նախապաշարմունքները, զրկանքներն ու անարդարությունը: Գասթարբայ թերական թեմատիկային նվիրված գրքերում ևս հեղինակը որդեգրել է այս գիծը՝ նկարագրելով նույն հասարակ մարդկանց կյանքը աշխարհագրական այլ միջավայրում:

Յետագա տարիներին «Գասթարբայ թերական» թեմատիկային են անդրադարձել նաև Դուրսուն Աքչամը, Յուսուֆ Չիյա Բահադընլըն (ծնվ. 1927թ.), Նազաթ Ուսթունը (1924-1979), Լեյլա Էրբիլը (1931-2013), Ադալեթ Ադադլուն, Նիհաթ Բեհրամը և այլոք: Բոլոր այս հեղինակներն էլ Բ. Յըլդըզի նման ներկայացնում են հիմնականում գասթարբայ թերների Գերմանիայի կյանքը, նոր միջավայրին հարմարվելու բարդությունը, հայրենիքի կարոտը և անխուսափելի օտարումը, ինչպես նաև Թուրքիայում մնացած ընտանիքների խնդիրները:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄԸ ՈՒ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

Այս գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:
Առաջին՝ **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԷԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲԼԱՈՐՈՒՄԸ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹՅՈՒՐԵՅՈՒՆԵՐ**

ենթագլխում նախ անդրադառնում ենք քիչ ուսումնասիրված մի երևույթի՝ գերմանաբնակ թուրքերի գրած ժողովրդական երգերին՝ թյուրքյուներին, որոնք էլ «համայնքային գրականության» ձևավորման հարցում կարևոր հիմք ծառայեցին: Սովորաբար եռատող կամ քառատող հանգավորված տներից բաղկացած թյուրքյուներն անդրադառնում են մարդու կյանքի տարբեր ոլորտներին՝ բովանդակային առումով ընդգրկելով թեմաների վայն շրջանակ՝ կենցաղին ու ընտանիքին նվիրված երգերից մինչև կրոնական, հայրենասիրական, սիրային և անգամ բանտային երգեր: Օտարության մեջ հայտնված թուրքաշխատողները իրենց առօրյան դարձրին թյուրքյուների թեմա՝ օգտագործելով երգերը որպես ծանր աշխատանքային օրերից հետո լիցքաթափվելու, սեփական հոլիզերը ինչ-որ կերպ արտահայտելու միջոց: «Գերմանական» թյուրքյուներ ընդհանուր անունով հայտնի այս երգերը նման են թուրքական համայնքի յուրօրինակ տարեգրության՝ արտացոլում են դրա զարգացման հիմնական փուլերը, համայնքային պատմության առանցքային իրադարձությունները: Չատկանշական է, որ թյուրքյուների քանակի աճը կամ նվազումը համեմատական է համայնքում տիրող ընդհանուր տրամադրվածությանը. համեմատաբար հանգիստ շրջաններում դրանք պակասում են, իսկ բեկումնային փուլերում՝ ավելանում: 1990-ականների կեսերից թյուրքյուները Գերմանիայում սկսեցին իրենց տեղը գիջել փոփ-մշակույթի ավելի արդիական ձևերին, օրինակ, հիփ-հոփին ու ռեփին, որոնք թուրք հետազոտող Քայայի բնորոշմամբ, թույլ են տալիս միգրանտներին ստեղծել սինկրետիկ մշակույթ՝ սփյուռքի գիտակցության և միջմշակութայնության խաչմերուկում:

Այս ենթագլխում ներկայացնում ենք նաև 1960-ականների վերջին - 1970-ականների սկզբին արդեն գերմանաբնակ թուրք գրողների առաջին ստեղծագործությունների ի հայտ գալը, անդրադարձ ենք կատարում նոր ձևավորվող թուրքական «համայնքային գրականության» նկատմամբ գերմանական հասարակության ու նեցած ընկալումներին: Տեսական ժամանակ թուրքերը և նրանց հետ կապված ամեն ինչ, այդ թվում գրականությունը, գերմանական հասարակության ու շարժումները նից դուրս էին: Միայն 1980-ականների

կեսերին միգրանտական (Գերմանիայում բացի թուրքականից սկսել էր զարգանալ նաև իտալական, արաբական, պարսկական, իսկ հետագայում նաև արևելաեվրոպական գրականություն) գրականության նկատմամբ հետաքրքրությունը սկսեց աճել: Այս մասին է վկայում 1985 թ. Մյունխենի համալսարանի կողմից ոչ գերմանացի գրողների համար Ադալբերտ ֆոն Քամիսոյի անվան հատուկ մրցանակի ստեղծումը: Մրցանակի առաջին դափնեկիր դարձավ հայ տնի թուրք գրող Արաս Օրենը:

Այս գլխի երկրորդ՝ **ՍՈՏԻԱԿԱՆ ԽՆԴԻՆԵՐԻ ԱՐՏԱՏՈՒՄԵՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ** ենթագլխում քննության են առնվում գերմանաբնակ թուրք գրողների առաջին ստեղծագործությունների թեմատիկ առանձնահատկությունները, որոնց համատեքստում ներկայացվում է այս շրջանում գրեթե բոլոր գրողների մոտ առանցքային հանդիսացող սոցիալական թեմատիկան:

Առաջին թուրք գրողների շարքերը բավական խայտաբղետ էին. հայ տնի հրապարակախոս, արձակագիր Ա. Օրենից ու Ֆ. Բայքուրթիից մինչև հասարակ բանվոր-վարպետներ Ֆ. Սավաչըն (1930-1989 թ.): Այս գրողներին, սակայն, միավորում էր մի բան. նրանք հայտնվել էին Գերմանիայում հասուն տարիքում, բոլորն էլ ծնվել և ապրել էին թուրքական մշակութային միջավայրում, դաստիարակվել այդ երկրի սովորույթների ու բարքերի համաձայն: Սա է պատճառը, որ Գերմանիայի թուրքական համայնքի գրականությունը կայացման փուլում գտնվում էր թուրքական մշակույթի ազդեցության տակ:

Գասթարբայ թերական թեմատիկան իր ուրույն տեղն ունի XX դարի թուրքական գրականության կարևորագույն դեմքերից Ֆաթիր Բայքուրթի մոտ: 1979 թ. Նշանակվելով Գերմանիայում թուրքական դպրոցների տեսուչ՝ հաստատվում է գերմանական Դոլյսբուրգ քաղաքում: Միգրանտական թեմատիկային են նվիրված գրողի «Կես հաց», «Մեծ Հրեհոս», «Բարձր վառարաններ» վեպերը ներառող «Դոլյսբուրգյան եռագրությունը» և «Գիշերային հերթափոխ», «Խաղաղության կարկանդակ» պատմվածքների ժողովածուները:

Երրորդ ենթագլխով՝ **ԱՐԵՎՈՒՏԵ-ԱՐԵՎԵԼՔ ՀԱԿԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԵՐԻ ԲԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ** նվիրված է թուրք գրողների ստեղծագործություններում իրար հակառոգ գերմանական և թուրքական մշակույթների կիզակետում հայտնված մարդկանց հոգեվիճակի արտացոլմանը: Արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների, քրիստոնեական և իսլամական

մի շարք ընկալու մներհի և դրանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի տրամագծային տարբերություները հանգեցնում է բազմաշերտ բախման: Թուրքական գյուղերից եկած, կարծրացած ավանդույթների աշխարհում ասպրող թուրք-միգրանտների համար գերմանական ազատական հասարակության վարքն ու բարքն իսկական մշակութային շոկ կարելի է համարել: Գերմանացիների համար էլ թուրքերն իրենց ավանդույթներով, արգելքներով ու սահմանափակումներով տարօրինակ, խորթ և անգամ ծիծաղելի էին: Երկկողմ անընկալելի լինելը պետք է խորը հակասությունների ու ճգնաժամային իրավիճակների առիթ դառնար, ինչն էլ իր հերթին չէր կարող դուրս մնալ գրականության ու շաղկապության: Թուրք հեղինակների համար ընդունող հասարակության անդամների հետ տարածայնությունները, փոխընկալման բարդությունները առաջնային տեղ ունեն և սոցիալական ինդիվիդուալիզմի ոչ պակաս կարևորություն են ստանում: Նրանք լուրջ տեղ են հատկացնում Թուրքիայի համար մշտապես այնքան արդիական Արևելք-Արևմուտք մշակութային բախման, քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների հակադրման համատեքստում սեփական թուրքական և նոր՝ գերմանական մշակութային համադրմանն ու համեմատական ներկայացմանը: 1960-ականների վերջում-1980-ականների կեսերին ստեղծագործող գրողների մոտ, սակայն, մենք չենք հանդիպում խորը հոգեբանական վերլուծություններ: Թուրք գրողներն որպես ռեալիստական ուղղության հետևորդներ նույնիսկ Արևմուտք-Արևելք հակամարտությունը ցույց են տալիս սովորական առօրեական օրինակներով՝ առանց ավելորդ պաթետիզմի: Մտածողության տարբերությունները հատկապես վառ են արտացոլվում կնոջ կերպարում, կին-տղամարդ հարաբերություններին, ընտանիքի նկատմամբ ունեցած վերաբերմունքին անդրադարձող ստեղծագործություններում:

1980-ականների կեսերին կյանք մտնող գերմանաբնակ թուրքերի երկրորդ սերունդը հայտնվեց թուրքական և գերմանական արժեքների բախման կիզակետում: Նախկին «զասթարբայ թերներն» ու նրանց երեխաները դառնում են այդ բախման և՛ ստեղծողը, և՛ գոհը միաժամանակ, մշակութային հատման խաչմերուկում չեն կարողանում գտնել իրենց տեղը: Այս վիճակը արտացոլվում է Գերմանիայի թուրք գրողների 1980-ականների գրված ստեղծագործությունների անգամ վերնագրերում՝ «Փնտրվում է եսը», «Դու ո՞վ ես» և այլն:

Բազմամշակութայնության գաղափարի պաշտոնական ներդրումից գրեթե մեկ տասնամյակ առաջ թուրք գրողներն արդեն խոսում էին մշակութային երկխոսության հնարավոր զարգացման կամ նույնիսկ մշակութային սինթեզի մասին: Առաջին անգամ այս թեմաներն արծարծել է Ա. Օրենը «Բեռլինյան եռագրության» մեջ:

Այս գաղափարներին զուգահեռ գերմանական հասարակության բացասական վերաբերմունքի համատեքստում թուրք գրողների ստեղծագործության նկատմամբ տեսնում ենք թուրքական սոցիալականության քարոզման տարրեր, թուրքականության և օսմանյան անցյալի իդեալականացման և գովերգման դրսևորումներ:

**ԳԼՈՒԽԵՐԻՈՐԴ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՅԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒ ՄՆԵՐԸ 1990-2000-ԱԿԱՆՆԵՐԻՆ**

Այս գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին՝ **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ. ԹԵՄԱՏԻԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**, ենթալիում ներկայացվում է թուրքական համայնքային գրականության հետագա զարգացումը: XX դարի վերջին տասնամյակում Գերմանիայի թուրքական գրականության մեջ տեղի ունեցան լուրջ փոփոխություններ. գրական ասպարեզ մտան նոր գրողներ (այդ թվում մեծ թվով կին-գրողներ), ովքեր իրենց հետքերեցին նոր մեթոդներ և թեմաներ, լեզվաճակատային թարմություն:

1990-ականների կեսերից թուրք գրողները սկսում են ստեղծագործել և տպագրվել գրեթե բացառապես գերմաներենով (նշենք, որ տպագրվող ստեղծագործությունների մեծ մասը շատ արագ թարգմանվում և լույս են տեսնում նաև թուրքերեն և անգլերեն): Ընդ որում, երբեմն գերմաներենը զարմանալի ձևափոխությունների է ենթարկվում: Օրինակ, նոր շրջանի հայտնի գրող Ֆերիդուն Չափմօղլուն (ծնվ. 1964թ.)

իր որոշ ստեղծագործություններում օգտագործում է գերմանալեզու թուրքերի՝ գերմաներենի և թուրքերենի սիլաբետիկ արդյունքում առաջացած, փոքր ցային, կիսաաբեհիկ արտահայտություններով համեմված «բանաբ» լեզուն: Գրողներ Մեհմեթ Քըլըջը (ծնվ. 1951 թ.), Ռեսան Դեմիրքանը տեքստում ներառում են ամենատարբեր թուրքերեն արտահայտություններ ու մեջբերումներ: Մեծ թվով թուրքական երգեր, ասույթներ է օգտագործում իր գրքերում է. Ս. Օզդամարը: Նրա գերմաներեն տեքստերը թուրքերենից բառացի թարգմանություններ են հիշեցնում: Չնայած հեղինակը կատարելապես տիրապետում է գերմաներենին՝ նա միտումնավոր քերականական, ուղղագրական և կետադրական սխալներ է անում՝ այս կերպ ընդգծելով իր պատկանելությունն օտար մշակույթին:

Նոր գրողների մուտքը գրականության և ազդարարվեց նաև թեմատիկ փոփոխություններով: Երիտասարդ հեղինակներն անդրադառնում են գերմանական իրականությանը, գերմանական հասարակությանը հոնգոլ հիմնական խնդիրներին: Գերմանական խնդիրների նկատմամբ աճիս գուգահեռ հետաքրքրությունը թուրքական խնդիրների հանդեպ պակասում է: Թուրքիան գնալով վերածվում է ավելի ու ավելի առասպելական և խորթ մի վայրի, որտեղ նույնիսկ արձակուրդի գնալուց անկողնում է չկա:

1990-ականներին սոցիալական թեմատիկ առավել թուրք գրողները կարևորում են թուրք-գերմանական մշակույթային տարբերությունների վերլուծությունը, գերմանացիների հետ թուրքերի հարաբերությունների ուսումնասիրումը, գերմանական հասարակության մեջ համայնքի ունեցած տեղի և դերի արժևորումը, ինտեգրացիոն մեխանիզմների քննարկումը և այս բոլորի հանրագումարում ստացվող թուրքական ինքնուրույն փոփոխման, պահպանման խնդրի ուսումնասիրությունը:

Երկրորդ ենթազվիտում՝ **ԻՆԵՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻ ԱՐՃԱՐՃՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1990-ԱԿԱՆ ԹԱԿԱՆՆԵՐԻՆ**, լուսաբանվում է հետզհետե մեծ կարևորությունն ձեռք բերող ինքնուրույն խնդիրը: Ըստ Գերմանիայի դաշնային վիճակագրական վարչության տվյալների, միջին վիճակագրական թուրքը Գերմանիայում բնակվում է 24 տարի: Ինքնուրույն ձևավորման համար սաբավական լուրջ ժամանակ է: Ստացվում է, որ հատկապես երիտասարդ թուրքերն իրենց սոցիալական կայացման փուլն ամբողջությամբ անց են կացրել գերմանական մշակույթային դաշտում: Չնայած այս փաստին՝ թուրքերի մեծ մասը ո՛չ գերմանական, ո՛չ էլ

թուրքական միջավայրում ամբողջապես ադապտացված չէ: Որևէ խմբին չպատկանելու զգացումը հանգեցնում է սեփական եսի մշտական փնտրտուքի:

Ինքնուրոյան ձևափոխման, պահպանման խնդիրները կենտրոնական տեղ են զբաղեցնում թուրք գրողների ստեղծագործություններում: Ինքնուրոյան փնտրտուքում թուրք գրողները մերթ անդրադառնում են անցյալին, գովաբանում Օսմանյան պետությունը, մերթ լիովին ժխտում թուրքական ամեն ինչ:

Թուրք-գերմանական ինքնուրոյան են նվիրված \$ 2 փմօղլուի ստեղծագործությունները: Իր գործերից յուրաքանչյուրում նա ներկայացնում է ինքնուրոյան խնդրի մի կոնկրետ կողմ, թուրք-գերմանական մշակութային հակասությունների հաղթահարման, համադրման մի տարբերակ: Կիրառելով էքսպրեսիոնիզմի և նատուրալիզմի տարրեր՝ նաստեղծում է վառ կերպարներ ու նկարագրություններ, գեոտեպիկ հասնող դրվագներ:

Ինքնուրոյան ճգնաժամին յուրօրինակ մարտահրավեր է դառնում որոշ գրողների լրիվ հրաժարումը միգրանտական թեմատիկայից: Օրինակ, ԱքիՖ Փիրինչչու (ծնվ. 1959 թ.) դեռեկտիվ վեպերի հերոս դառնում է կատուն: Միգրանտական թեմատիկային գրեթե չեն անդրադառնում վերջին տարիներին տպագրվող այնպիսի հեղինակներ, ինչպես օրինակ Էրգին Օզգենը, Դիլեթ 2ախթըջըօղլուն (ծնվ. 1960 թ.), Սելիմ Օզդողանը (ծնվ. 1971 թ.):

Երրորդ՝ **ՅԱՅՈՏ** **ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ** **ԹԵՄԱՆ**
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ **ԹՈՒՐԷ** **ԳՐՈՂՆԵՐԻ**

ՍՏԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ենթազվ խում ներկայացված է թուրք գրողների անդրադարձը Յայոց ցեղասպանությանը և առհասարակ հայկական թեմատիկան: Ինքնուրոյան փնտրտուքների խաչմերուկներում, Գերմանիայի թուրք գրողների համար, ուսումնասիրման և քննարկման առարկա է դառնում Յայոց ցեղասպանության հարցը: Այս թեմային ծավալուն անդրադարձների ենք հանդիպում հատկապես 1990-ականների կեսերին գրված ստեղծագործություններում: Ժողովրդավարական ու ազատական եվրոպական հասարակությունը պարարտ հող էր ստեղծում պատմական իրողությունները բազմակողմանի ուսումնասիրելու և օբյեկտիվ գնահատականներ տալու համար: Արդեն եվրոպական նորմերով մեծացած Գերմանիայի թուրք գրողների համար թերևս փոքր-ինչ ավելի հեշտ էր կոտրել Թուրքիայում այդ ժամանակ դեռ խտագույնս պահպանվող ցեղասպանության թեմայի վերաբերյալ տաքուն:

Գերմանաբնակ թուրք գրողների շարքում Յայոց ցեղասպանության թեման վեր են հանել 2աֆեր Ծենոջաքը

«Վտանգավոր բարեկամություն», «Ճամփորդությունն դեպի անեություն» վեպերում, Էմինե Սևգի Օզդամարը «Չայելու միջի բակը», «Տարօրինակ աստղերն անթարթ նայում են երկնքին» գրքերում, Քեմալ Յալչընը «Սարը գելին», «Անատոլիայի գավակները: 100-ամյակի վկաները» ստեղծագործություններում: Ընդ որում, եթե Ք. Յալչընի ստեղծագործություններն որոշ չափով հայտնի են հայ ընթերցողին, իսկ նրա «Սիրտս քեզնով է խայտում» գիրքը նույնիսկ հասանելի հայ երեւոյ, ապա Է. Ս. Օզդամարի և Չ. Ծենոջաքի անունները Չայաստանում գրեթե արծարծված չեն: Մինչդեռ նրանց ստեղծագործություններում Չայոց ցեղապանությանը վերաբերող ակնարկները, առաջին հայացքից հպանցիկ թվացող հիշատակումները բավական ուշագրավ են: Ցեղապանության թեմային փոքրիկ ակնարկով անդրադարձել է նաև ավելի վաղ սերնդի գրող Նիհաթ Բեհրամը: Թուրք գրողների երբեմն մանրամասն, երբեմն էլ հպանցիկ անդրադարձները մի կողմից մասնագետներին ուսումնասիրման համար բավական հետաքրքիր նյութ են տալիս, մյուս կողմից էլ հասարակ գերմանացի կամ թուրք ընթերցողին թույլ են տալիս ծանոթանալ XX դարակազմի մեծ ողբերգության առանձին դրվագների հետ:

Ատենախոսության վերջում ներկայացվում են **եզրակացությունները.**

1. 1950-60-ականների եվրոպական «տնտեսական հրաշքի» համատեքստում սկիզբ առած հյուր-աշխատողների ներգաղթի արդյունքում Գերմանիայում ձևավորվեց թուրքական մեծ համայնք, որի ինտեգրումն ընդունող հասարակությանը միշտ քառնաճակատով ամբողջական չէ: Այս ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած միջոցները բավարար արդյունքներ չեն տալիս: Միևնույն ժամանակ պատ է, որ միգրանտներն իրենց տեղն ունեն հասարակության բոլոր օղակներում՝ քաղաքականությանից և տնտեսությանից մինչև մշակույթ ու սպորտ:
2. Թուրքիայից Գերմանիա միգրացիան այնքան կարևոր և մասշտաբային երևույթ էր թուրքական իրականությունում, որ իր արտացոլումը գտավ գրականության մեջ: 1960-80-ականներին թուրք գրականության մեջ ձևավորվեց և իր տեղը գտավ «գաթարբայ թերական» թեմատիկան: Այդ խնդիրներին անդրադարձող գրողների մեծ մասը մի քանի տարի Գերմանիայում աշխատելով կամ

քաղաքական պատճառներով այնտեղ հայտնվելով՝ թղթին են հանձնում իրենց փորձառու թյուրը, որը հազարավոր հյուր-աշխատողների ապրած կյանքի հավաքական ներկայացումն էր:

3. Թուրք գրականության մեջ «գաթարբայ թերական» ուղղության զարգացմանը գուգահեռ Գերմանիայում 1960-ականների վերջից ի հայտ եկավ նոր յուրատեսակ «համայնքային գրականություն», որի շրջանակներում գերմանալեզու թուրքերի խնդիրներին են անդրադարձնում հենց այնտեղ բնակություն հաստատած գրողներ: 1960-80-ականները կարելի է անվանել Գերմանիայի թուրք գրականության առաջին փուլ:
4. 1980-ականների կեսերից թուրք գրողները արժարժում են երկու մշակույթների համատեղ խաղաղ գոյակցության հարցը՝ համարյա մեկուկես տասնամյակով նախորդելով Գերմանիայում բազմամշակութայնության գաղափարի պաշտոնական ներդրմանը: 1980-ականների վերջից Գերմանիայի թուրք գրականությունը մտնում է զարգացման նոր փուլ՝ վերածվելով թուրքական ու գերմանական մշակույթների, երկու հասարակությունների շփման, համադրման արդյունքում ձևավորվող նոր, երրորդ հարթության, որի կրողներն են թե՛ թուրքերը, թե՛ գերմանացիները:
5. Վերջին քսան-քսանհինգ տարիների ընթացքում ինքնության խնդիրը ամենատարբեր արտահայտումներով ամսացքային դեր ունի Գերմանիայի թուրք գրողների ստեղծագործություններում: Սեփական ես-ի փնտրտուքների ճանապարհներին գրողները, ծայրահեղություններից ծարահեղությունը, մերթ մերթ ժխտում են թուրքականությունը, մերթ դառնում մոլի ազգայնական, մերթ ընդհանրապես խուսափում այդ խնդրի քննարկումից:
6. 1990-ականների սկզբից Հայոց ցեղասպանության խնդիրը գերմանալեզու թուրքերի առաջադեմ ներկայացուցիչների հետաքրքրությունների շարքում է: Իրենց ստեղծագործություններում հպանցիկ անդրադարձներով թուրք գրողներ Է. Ս. Օզդամարը, Չենոջաքը, Ք. Յալչընը ներկայացնում են ցեղասպանության ողջ ընթացքը՝ բռնի տեղահանությունից մինչև հայերի ունեցվածքի սեփականացում: Երբեմն

բացահայտ, երբեմն էլ տողատակերում թաքնված
ակնարկներով ներկայացնում են եղելությունը:
Նույն հեղինակներն իրենց հրապարակախոսական
ելույթներում բացեիբաց քննադատում են
թուրքական իշխանությունների
ժխտողականությունը, կոչ անում ճանաչել
անցյալում գործած դաժանությունները:

Ատենափոստության թեմայով հրատարակված աշխատանքներ

Մենագրություն

1. Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 2016 (համահեղինակ՝ Ս. Կարապրոսյան), 146 էջ:

Գիտական հոդվածներ

1. Գերմանիայի թուրքական համայնքը 1960-2000-ական թթ.. համառոտակնարկ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2012, հ. 7, էջ 300-314:
2. Թուրքական բանահյուսությունը Եվրոպայում. «գերմանական թուրքությունների» որոշ ամսնձևատկությունները, 2 շուրջ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2013, հ. 8, էջ 215-228:
3. «Գասթարբայթերական» թեմատիկան թուրք գրող Բեքիր Յըլդըզի ստեղծագործություններում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, 1(1), էջ 98-102:
4. «Գասթարբայթերական» թեմատիկայի ձևավորումը թուրք գրականության մեջ. Բեքիր Յըլդըզ, Մերձավոր Արևելք, Երևան, 2014, N 9-10, էջ 646-654:
5. Հայոց ցեղասպանության թեման Գերմանիայի թուրք գրողների ստեղծագործություններում, Արևելագիտության հարցեր, Երևան, 2015, հ. 9, էջ 311-337:
6. Особенности становления литературы турецкой общины Германии (1960–1980-е годы) Вестник МГУ, сер. 13. Востоковедение, Москва, 2015. № 3, 57-64.
7. Հայկական հարցը գերմանալեզու թուրք գրող Չաֆեր Շենոջաթի ստեղծագործություններում, Ծայագիտության հարցեր, Երևան, 2015, (3) 6, էջ 69-79:
8. Некоторые особенности использования немецкого языка в работах турецких писателей Германии, Лингвистика XXI века: традиции и новации: Сборник трудов по материалам международной научной конференции памяти профессора В.В. Лазарева, Пятигорск, 2016, стр. 378-385.
9. Ինքնության ինդիքը գերմանալեզու թուրք գրողների ստեղծագործություններում 1990-2000-ական թվականներին, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2.5 (15), Երևան, 2016, էջ 48-52:
10. Միգրանտական թեման Ֆաթիմ Բայքուրթի «Դոլսբուրգյան եռագրություն» մեջ,

Արևել ազիտու թյ ան հարցեր, Երևան, 2016, հ. 11, Էջ
205-216:

Наира Акоповна Погосян

Отражение социальных и культурных проблем турецкой общины Германии в турецкой литературе 1960-2000-ых годов: становление «гастарбайтерской» литературы и тематические особенности.

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07 – «Зарубежная литература». Защита состоится 24 июня 2014 года в 14:00 на заседании специализированного совета ВАК 003 по «Армянской и зарубежной литературе», действующего при Институте литературы имени М. Абеяна, по адресу: 0002, Республика Армения, г. Ереван, ул. Григора Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Формирование турецкой общины Германии началось в 1960-е годы, когда на основе подписанного в 1961 г. межправительственного договора о приглашении “временных гостей-рабочих” (по-немецки *Gastarbeiter*) первые турецкие иммигранты выехали в Федеративную Республику Германии. Сегодня в Германии проживает более трех миллионов турок. Несмотря на серьезные проблемы в вопросе интеграции общины, турки давно уже стали неотъемлемой частью немецкого общества. Неудивительно, что Кройцберг (турецкий квартал Берлина) часто называют «третьим по величине турецким городом в мире». Параллельно становлению общины в Германии сформировалась «турецкая общинная литература», особенности развития которой и являются темой данной работы. В диссертации изучены основные этапы формирования и развития литературы турецкой общины Германии, сделана попытка представить тематические особенности произведений проживающих в Германии писателей-прозаиков разных периодов.

Турецкая литература Германии прошла серьезный, сложный путь развития, менее чем за полвека превратившись из общности представляющих внутриобщинные проблемы малохудожественных произведений в литературу, которая апеллирует к всечеловеческим вопросам, переводится на разные языки и вызывает интерес во всем мире. Не случайно, некоторые турецких писатели Германии известны далеко за ее пределами, а их произведения отмечены престижными европейскими и мировыми литературными премиями. Сформированная на стыке турецкой и немецкой культур, турецкая литература Германии – интересное, многогранное явление, интерес к которому в последние годы проявляют не только немецкие и турецкие, но и российские, американские, европейские ученые. В армянской действительности эта тема практически не изучена.

Главными источниками при написании работы стали художественные произведения турецких писателей Германии на турецком языке.

Ключевыми для написания диссертации стали литературоведческие аналитические работы советских, российских, американских, турецких и армянских ученых. Для освещения исторического контекста развития турецкой литературы Германии были использованы работы советских, российских, европейских, турецких исследователей.

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подглавами, заключения и списка использованных источников литературы. Во введении обосновывается актуальность темы, представлены основные цели работы, научная новизна, обзор использованной литературы.

Первая глава состоит из трех подглав. В первой подглаве представлена краткая история формирования турецкой диаспоры, и, в частности, немецкой общины, а также краткий анализ современного положения турок в Германии. Следующие две подглавы посвящены становлению «гастарбайтерской» тематики в турецкой прозе середины XX века, представлены романы писателей Б. Йылдыза, А. Агаоглу, Н. Бехрама. Во второй главе, также состоящей из трех подглав, представлено развитие турецкой литературы Германии с конца 1960-ых до середины 1980-ых годов, изучены основные тематические особенности работ таких авторов как Ю. Пазаркая, Ф. Савашчи и т.д. В главе отдельно рассматривается народное творчество турецких мигрантов, ставшее основой для развития литературы.

Три подглавы третьей главы представляют турецкую литературу Германии 1990-ых – 2000-ых годов, особое внимание уделено переходу от традиционных социальных вопросов к теме интеграции, сохранения идентичности, поиска собственного я. Меняются не только темы, но и литературные и языковые предпочтения авторов, что отражено в нашей работе.

В конце диссертации представлены выводы.

Naira Hakob Poghosyan

The reflection of social and cultural problems of Turkish community in Germany in the Turkish prose in 1960-2000s: the formation and theme peculiarities of “gastarbeiter” literature.

The Dissertation to obtain the scientific degree of Candidate of Philological Sciences, in the specialty of “Foreign Literature” (Specialty code 10.01.07).

The public defense of the dissertation is scheduled for June 24th, 2016, at 14:00, at the meeting of the Specialized Council of “Armenian and Foreign Literature” 003 at the Institute for Literature after M. Abeghyan NAS RA. Address: 15 Grigor Lusavorich Street, Yerevan, RA, 0002.

Summary

The formation of Turkish community of Germany started in 1960s when the first Turkish migrant-workers (gastarbeiter in German) went to the Federal Republic of Germany according to the intergovernmental agreement signed between Turkey and Germany on 1961. Nowadays there are more than 3 million Turks in Germany. Despite of serious problems with integration, Turks have already become the integral part of German society. It's not amazing that Korfplatz (Turkish district of Berlin, capital of Germany) is often referred as “the third biggest Turkish city in the world”.

The aim of the dissertation is to study main features of the Turkish “community literature” started to develop simultaneously with the community. The main stages of formation and development of the Turkish community literature in Germany are analysed in the dissertation. Also we attempted to study the theme peculiarities of the works of Turkish-German prose writers of different periods from 1960s till 2000s.

In recent 50 years the Turkish community literature passed hard and interesting way of development. From the and now it's really interesting phenomenon which is under the attention of scientists from all over the world. Once being just the community of nearly non-artistic works representing only Turkish community problems now it become the literature dealing not only with German but also universal problems. Many Turkish-German writers are famous far away from Germany, their works are being translated into many languages and get various prestigious literature awards not only in Germany, but also in Europe and all over the world.

Being developed in the crossroads of Turkish and German cultures the Turkish community literature is interesting, many-sided phenomenon which is now under the attention of scientists from Turkey, Germany as well as Russia, USA and Europe. However, in the Republic of Armenia this is the first study on this subject. The fictional works of Turkish-German writers are the main sources used in this work. The works on literary studies of Soviet, Russian, American, European and Turkish specialists are also extremely

important and useful for our work. We use works of Armenian, Soviet, Russian, European and Turkish writers to refer to the historical background of our research.

The dissertation consists of introduction, three chapters with their corresponding subchapters, conclusion and bibliography.

The Introduction of our research describes the main objectives, the methodological basis of the study, its pragmatic significance; it also justifies the novelty, importance and aim of the theme. A brief review of literature is also provided.

The first chapter consists of three subchapters. In the first subchapter we tried to study the history of formation of Turkish community in Germany as well as modern problems and challenges the Turkish migrants have to encounter. The second subchapter is devoted to the development of Turkish prose from XIX , the main literary directions of the mid of XX century and the emergence of “gastarbeiter” literature in Turkey and Germany. In this subchapter we analysed the works of such famous Turkish writers as B. Yilidiz, A. Agaoglu, N. Behram.

The second chapter also consists of three subchapters. The first subchapter is about the unique Turkish form of literature - German “turkus”. In the second chapter the first stage of development of “gastarbeiter” literature in Germany is studied. The main peculiarities of works by first Turkish-German authors Y. Pazarkaya, F. Savashchi are shown. In the third chapter we try to describe the social and cultural problems reflected in the works of Turkish writers of this period.

The three subchapters of the third chapter are devoted to the main tendencies of development of Turkish-German literature.

In the Conclusion we have resumed general resolutions and remarks of the research.

